ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
24.12.2024թ. հարցման կարգով կայացած նիստի թիվ 7 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Արինա Պարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն, գիտ. ղեկավար՝ դոցենտ, բ.գ.թ. Քրիստինե Հարությունյան):

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Արինա Պարոնյանի «**Persuasion and Power in Business Communication**» թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն, գիտ. ղեկավար՝ դոցենտ, բ.գ.թ. Քրիստինե Հարությունյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ներկայացվեց թեմայի ուսումնասիրության շրջանակը՝ նշելով, որ գործարար հաղորդակցության վերլուծությունը ներառում է ինչպես որոշակի լեզվական կառույցներ ընտրելու, այնպես էլ դրանք պայմանավորող համատեքստային գործոնների ուսումնասիրություն, որոնք ազդում են հաղորդակցության գործընթացի վրա, ինչպիսիք են կազմակերպչական աստիճանակարգությունը, մշակութային ակնկալիքները և բիզնես նպատակները: Հետազոտությունը ենթադրում է գործարար հաղորդակցության բազմաշերտ համատեքստի ուսումնասիրություն (էլեկտրոնային նամակներ, պայմանագրեր, բիզնես պլաններ): Թեման արդիական է, քանի որ գործնական հաղորդակցության լեզուն հաճախ ազդում է որոշումների կայացման, ինչպես նաև բիզնեսի բարոյական և սոցիալական դինամիկայի բացահայտման վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Արինա Պարոնյանի «**Persuasion and Power in Business Communication**» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարին (դոցենտ, բ.գ.թ. Քրիստինե Հարությունյան)՝ հորդորելով ուսումնասիրության մեջ, բացի ներկայացրած օրինակներից, ներառել նաև բիզնես պայմանագրերի այլ տեսակների ուսումնասիրություններ՝ աշխատանքն ավելի ընդգրկուն դարձնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի
դեկան և գիտխորհրդի
նախագահ, բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան